

ԱՂՈՒՆՔՈՒՄ ԱՐԾԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՌՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՄԻՆ

Յայտնի է, որ Ժ դարի վերջի հայ պատմիչ Մովսես Դավթուրյանցու (մատենագրութեան եւ պատմագրութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկստուացի) «Պատմութիւն Աղուանից» աշխատութեան մէջ՝ գրեթէ բառացի արտագրութեամբ պահպանուած են Հայոց Արեւելից կողմանց վաղմիջնադարեան գրչութեան կենտրոններում ստեղծուած պատմական ու գրական բազմաթիւ երկեր²: Դրանց թում հայագետների եւ արեւելագետների ուշադրութիւնը վաղուց գրաւել է Աղուանից վերջին՝ Վաչագան Բարեպաշտ թագաւորի մասին պատմող երկասիրութիւնը, որին ներկայումս, ելնելով երկի ոճական առանձնայատկութիւններից, պայմանականօրէն տրուած է «Վաչագանի վէպ» անուանումը: Հ. Ներսէս Ալիմեանի, Կիւմ Ղահրամանեանի եւ տողերիս հեղինակի կողմից արդէն բաւականին ճշգրտուած են այդ երկի բնագրային սահմանները («Պատմութիւն Աղուանից»-ի Ա գրքի Ջ գլխի առանձին կտորներ եւ ԺԴ-ԻԳ գլուխները, բացի ԺԵ-ի առաջին կէսից), ինչպէս նաեւ Ժ դարի հեղինակի միջամտութիւնները (այդ թում՝ բաժանումը գլուխների եւ դրանց վերնագրումը)³, որի շնորհիւ հնարաւոր է դառնում նրա առաւել հաւաստի օգտագործումը իբրեւ սկզբնաղբիւր⁴: Երկի ամանուն հեղինակը իրադարձութիւններին ժամանակով մօտ կանգնած կամ ականատես մատենագիր է, իսկ բնօրինակային վերնագիրը, ամենայն հաւանականութեամբ, պահպանուած է Ա.Ժգ գլխի վերտառութեան մէջ. «Կեանք եւ վարք եւ վարձաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եղան, եւ զիտք նշխարաց սրբոց»⁵:

Յայտնի է նաեւ, որ Ե-Ջ դարերի հայ մատենագրութեան առաւել ճանաչուած աղբիւրներում չեն պահպանուել Վաչագան թագաւորին վերաբերող վկայութիւններ, փոխարէնը՝ «Պատմութիւն Աղուանից»-ում եւ այլուր պահպանուած են նրա անուան հետ կապուած մեծ թումլ կրոնաբարոյագիտական բովանդակութեան եւ նշխարների գիտերին վերաբերող ակնյայտօրէն ուշ գրուածքներ, աւանդութիւններ եւ անգամ վիճաբանական վկայութիւններ: Դրանցից շատերի հաւաստիութեան նկատմամբ իմնաւոր կասկածը Հ. Ներսէս Ալիմեանի համար պատճառ էր դարձել մերժելու հենց թագաւորի իսկ պատմականութիւնը⁶: Ժամանակին մենք, թում էր, թէ զգոյշ ենք եղել այդ հարցում՝ յատուկ նշելով, որ Վաչագանի պատմականութեան խնդիրը ճիշտ կը լինէր քննարկել հետագայ վերագրումներից ու աւանդական նիւթից անկախ, այսինքն՝ միմիայն «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուանի կանոնների հաղորդած տեղեկութիւնների շրջանակում: Սակայն նկատելով (որոշ դէպքերում՝ սխալ) հենց այս սկզբնաղբիւրների պարունակած ինչ-ինչ հակասութիւններ՝ մենք եւս, ի վերջոյ, երկուսն էլ համարել էինք ոչ համաժամանակեայ եւ թուագրել Ջ դարի երկրորդ կէսով, շտապելով եզրակացնել, որ եթէ անգամ ընդունենք Վաչագանի պատմականութիւնը, ապա ա-

ռանց լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի դժուարանալու ենք ասել, թէ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների ո՞ր տեղեկութիւններն է հնարաւոր վերագրել այդ իրական թագաւորին՝

Բարեբախտաբար մի քանի տարի առաջ մեր ուշադրութիւնը լրջօրէն գրաւեց մի հակասութիւն «Պատմութիւն Աղուանից»-ի Ա եւ Բ խմբերի ձեռագրերի ընթերցումներում, որի քննութեան շնորհիւ հնարաւոր եղաւ վերհանել ժամանակին վրիպած իրական պատկերը: Դրա հիման վրայ հրատարակուեց մեր՝ ««Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում» աշխատանքը⁸, ուր ցոյց տրուեց, որ կարելի է ամենայն վստահութեամբ վերաբերուել Վէպի փաստօրէն բոլոր տոհմաբանական ցուցումներ պարունակող վկայութիւններին, ինչպէս նաեւ «Աղուէնի կանոնների» հաւաստիութեան խնդրին, քանի որ ո՛չ Բուն Աղուանքի Վաչագան Բարեպաշտ թագաւորի պատմականութիւնը, ո՛չ «Վաչագանի վէպ»-ի ու Աղուէնի ժողովի հաւաստիութիւնը մերժելու համար իրական հիմքեր չկան:

Կրկնելով այդ եզրայանգումը՝ հարկ է միաժամանակ եւս մէկ անգամ վերապահում անել այն մասին, որ «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուէնի կանոնների հաւաստիութեան ճշտումից յետոյ նրանց գաղափարական ուղղութեան գնահատականը գրեթէ չի փոխուում: Կուրի հայկական աջափնեակում ստեղծուած այդ ծրագրային փաստաթղթերն իրօք պարունակում են Բուն Աղուանքի Արշակունեաց արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ թագաւորի ձեռքով Աղուանից աշխարհում (արդէն մարգարանութեան ընդգրկմամբ) կատարուած աստուածահաճոյ գործերի շարադրանքը եւ մեծարժէք տուեալներ են պահպանել բուն աղուանական ինչ-ինչ իրողութիւնների (ռեալիաների) մասին, որոնք անփոխարինելի նշխարներ են աղուանագէտների համար: Սակայն այնուամենայնիւ նրանց գաղափարական նպատակն է եղել ամրապնդել Սասանեան տէրութեան գերիշխանութեանը ենթակայ Աղուանք-Առան վարչա-քաղաքական միաւորի մէջ Աղուանից եկեղեցու շուրջ համախմբուած քրիստոնեայ հասարակութիւնը (իր բուն աղուանական եւ հայկական էթնիկական մասերով) ո՛չ թէ բուն աղուանական էթնոշնչկութային համակարգի գործառնման ոլորտի ընդլայնման, այլ ընդհակառակը՝ Կուրի աջափնեակի հայութեան ազգային-մշակութային-դասական անանդները այդ ամբողջ հասարակութեան մէջ հաստատագրելու ճանապարհով՝

Այստեղ նաեւ կրկնենք նախորդ աշխատանքի այն հատուածի հիմնական դրոյթները (անհրաժեշտ լրացումներ կատարելով), որոնք թոյլ են տալիս բաւականաչափ ճշգրտութեամբ վեր հանել «Վաչագանի վէպ»-ի ստեղծման ժամանակի խնդիրը: Այդ խնդիրը լուծւում է Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Շուփհադիշոյ կաթողիկոսի մասին վկայութիւնների քննութեան շնորհիւ:

Շուփհադիշոյի անունը յայտնուում է երկի միայն վերջին հատուածում («Պատմութիւն Աղուանից»-ի գլուխ Ա.իգ՝ արքայական «քանակի»՝ Ամարասից Դիտական յետադարձ ճանապարհի նկարագրութեան մէջ:

Ըստ դրա՝ Ամարասի գետակը յետ անցնելուց յետոյ թագաւորը փոքրիկ դադար է յայտարարում («անցուցանէր ընդ նոյն գետն. եւ կացուցանել հրամայէր զդեսպակս սրբոցն»), որպէսզի գիտնուի հաւաքուած շրջակայ ժողովրդին տներն ուղարկի («եւ եպիսկոպոսացն՝ արիննեալ զխառնիճաղանճ բազմութիւնն՝ հրամայէին զմալ յիրաքանչիւր տեղիս»): Մնում են միայն հոգեւորականները, որոնց հետ թագաւորը, թագուհին եւ արքունականները հասնում են Քարունճ ամառանոց գիւղը («Եւ զդասս եպիսկոպոսաց եւ երիցանց եւ այլ պատուական արանց առեալ ընդ սրբոցն՝ տանէր մինչեւ ցՔսարունճ աթի տեղ»): Թում է, թէ Քարունճում եկեղեցական ժողովի մնան մի բան է տեղի ունեցել, որի ընթացքում հոգեւորականներն օրհնել են արքային եւ Շուշանիկ աշխարհատիկնոջը. «եւ նոցա միաբան արիննեալ զթագաւորն թագուհուովն [շ թագուհեան] հանդերձ եւ ամենայն դրամբն՝ սուսն [եւելշ ասացեալ]». «Ձամենայն բարի, զոր խնդրեսցես դու յԱստուծոյ, ի ձեռն սրբոյն Գրիգորիսի տացէ քեզ: Եւ շնորհեսցէ մեզ լինել քեզ [եւելշ չիք քեզ] ընդ երկայն ատուրս խաղաղասէր ընդ աշխարհի եւ ի փառազարդութիւն եկեղեցոյ [եւելշ եկեղեցեաց] առաւելապէս յորդորելով [ա յարդարելով] ար ըստ արե»¹⁰: Ի դէպ, ճիշտ այդպէս Վաչագան թագաւորին հետագայում օրհնել է Աղունճի եկեղեցական ժողովը. «Ձայս պայման արարին եպիսկոպոսունք եւ քահանայք եւ ազատ մարդիկ առաջի արքայի, եթէ ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ յեկեղեցոյ բերանոյ արիննեալ լիցի՝ [եւելշ եղիցի] թագաւորն թագուհուովն եւ զաւակովն հանդերձ, եւ ամենայն աշխարհովս [եւելշ աշխարհաւս] հանդերձ, որք յայս ժողովս են, արիննեալ եղիցին»¹¹:

«Վաչագանի վէպի» հեղինակն այնուհետեւ գրում է. «Եւ առեալ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ [ա Շուփհաղիշոյ], եւ յորժամ գետուջ ուրուք [եւելշ գեղջ ուրեք] յայտ ելանէր դեսպակ սրբոցն, իջանէր թագաւորն եւ հետեւակ սպասարկէր սրբոցն, մինչեւ տարեալ ընդ շինանիստն անցուցանէր: ... Այս ձեռով զային հասանէին ի սեփական գիւղն Գիւտական [եւելշ Դուտական] եւ անդ հանգուցանէին...»¹²: Բերուած հատուածներից կարելի է եզրակացնել, որ Շուփհաղիշոյ եպիսկոպոսապետը մասնակցել է Վաչագան Բարեպաշտի երթին եթէ ոչ ամենասկզբից, ապա զոմէ Ամարասից յետադարձ ճանապարհից կամ Քարունճի եկեղեցական ժողովից սկսած: Տեղին նշենք, որ բնագրի ընդգծուած հատուածում եպիսկոպոսապետ բառի «աւագ» մակդիրը, ուսումնասիրողների արդարացի կարծիքով՝ տեղեկատուական որեւէ արժէք չի ներկայացնում¹³:

Շուփհաղիշոն յիշում է նաեւ Աղունճի եկեղեցական ժողովի մասնակիցների շարքում որպէս «Պարտաւայ արքեպիսկոպոս»: Ժողովի արձանագրութիւնը պահպանուել է «Պատմութիւն Աղունճից»-ի առաջին գրքում՝ Վաչագան Բարեպաշտին վերաբերող զլուխների վերջում (զլուխ ԻԶ), եւ Հայոց կանոնագրքի՝ մօտաւորապէս Ժ-ԺԱ դդ. սահմանազխիսին ձեւաւորուած դասական խմբագրութեան ձեռագրերում (Ա ձեռագրախմբում՝ ԼԵ, իսկ Բ-ում՝ ԼԺ կանոնախումբ)¹⁴: Գրչական որոշ (երբեմն բաւական մեծ) տարընթերցումների պայմաններում երկու տարբերակում էլ «Շուփհաղիշոյ

[Կանոնագրքում՝ *Շուփադիշոյ*] Պարտաւայ արքեպիսկոպոս»-ը յիշատակուում է առանց լուրջ շեղումների՝ Վաչագան արքայի անունից անմիջապէս յետոյ, ժողովի բուն արձանագրութեան ամենասկզբում («Եւ Վաչագան՝ Աղուանից արքայ, Շուփեադիշոյ՝ *Պարտաւայ* արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապադակայ [a Կապադայ] եպիսկոպոս...»)՝: Տեղին յաւելենք, որ ժողովի մասնակիցների նոյն ցուցակում յիշատակուում է նաեւ «Մատթէ *Պարտաւայ* երէց»-ը):

Այստեղ կրկնենք նաեւ նախկինում մեր արտայայտած կարծիքը Աղուեհի կանոնների առաջին պարբերութեան մասին («Յամա Վաչագանայ՝ Աղուանից արքայի բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց եւ եպիսկոպոսաց եւ քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց եւ ռամկաց: Այլաւ կամ եղեւ արքայի՝ առնել ժողով յԱղուեհն՝ բազմամբոյս աւտեան, յամսեանն մարերի, որ աւր երեքտասան էր ամսոյն»): Սեր համոզմամբ՝ այն բխում է ոչ թէ Աղուեհի ժողովի արձանագրութեան սկզբնօրինակից, այլ աւելացում է Կանոնագրքի կամ մէկ այլ բնոյթի (օրինակ՝ տոհմամատենանային) ժողովածոյ կազմողի կողմից, ճիշտ այնպէս, ինչպէս դա արուել է սկզբնօրինակային «քացատրագիր» չունեցած շատ ուրիշ կանոնախմբերի կամ Թրթոց գրքերի նիւթերի համար¹⁶: Դա նշանակում է, որ Մովսէս Դասխուրանցին կամ նրա մի նախորդն է Աղուեհի կանոնների բնագիրն ընթօրինակել որեւէ կանոնագրքից կամ տոհմամատենանից, ոչ թէ՝ հակառակը¹⁷: Դա նաեւ նշանակում է, որ անհրաժեշտ է որոշ վերապահումով մօտենալ «մարերի ամսի 13» ամսաթուի հաւաստիութեանը, որը նշուած է առանց արքայի տիրակալութեան համապատասխան տարուայ յիշատակութեան. թպէտ, հնարատր է նաեւ, որ Կանոնագրքի կամ տոհմամատենանային ժողովածոն կազմողը այդ ամսաթիւը քաղել է Աղուեհի ժողովի արձանագրութեան՝ իր ձեռքի տակ եղած բնագրի (գուցէ՝ մագաղաթեայ փաստաթղթի լուսանցքների կամ յետեւի կողմի) ինչ-որ մի նշումից: Տեղին նշենք նաեւ, որ վերջերս Յովհաննէս Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց»-ի նախնական ժողովածոյի քննական բնագրի պատրաստման առիթով մեր կողմից ճշտուել է, որ Աղուեհի կանոնների բնագիրը Արցախից կենտրոնական Հայաստան է բերուել եւ այդպիսով Կանոնագրքի դասականացմանը ձեռնարկած վարդապետների տեսադաշտում յայտնուել, ամենայն հաւանականութեամբ, Անանիա Մոկացու շնորհիւ¹⁸:

Ժամանակին Շուփեադիշոյի՝ *Պարտաւայ* արքեպիսկոպոս կոչուելու (ինչպէս նաեւ *Պարտաւայ* Մատթէ երէցի յիշատակութեան) հանգամանքը մեզ համար հիմք էր դարձել կասկածելու Աղուեհի կանոնների հաւաստիութեանը (ըստ այդմ՝ նաեւ «աւագ եպիսկոպոսապետ Շուփեադիշոյին» ճանաչող «Վաչագանի վէպ»-ի հաւաստիութեանը), քանի որ, ինչպէս յայտնի է, Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստը մինչեւ 552 թ. Կուր գետի աջափնեակ տեղափոխուելը գտնուել է Չողում, որը ժամանակակից Դերբենդ քաղաքն է¹⁹: Մանրամասնենք, որ Աղուանից կաթողիկոսանիստի նշուած տեղափոխման մասին տեղեկութիւնը հաղորդում է Մովսէս Դասխուրանցու օգտագործած աղբիւրներից մէկը՝ այսպէս կոչուած «Աղուանից

գաւազանագիրքը»: Մենք այն համարում ենք տոհմամատեանային գրա-
ռումների հիման վրայ Ժ դարի առաջին կեսում ստեղծուած ժամանակա-
գրական երկ, որը նոյն դարի վերջին եղել է Դասիտորանցու ձեռքի տակ¹:
Պատմիչն արտագրել է նրա բովանդակութիւնը իր երկի վերջին գլխում
(գլխի Գ.իգ՝ «Անուանք հայրապետացն Աղուանից, ամբ եւ գործք նոցին»)
սակայն նրա որոշ տեղեկութիւններ էլ տեղափոխել է «Պատմութիւն Աղուա-
նից»-ի տարբեր գլխեր: Մասնատրապէս, այդ ձեւով է նա ստեղծել Բ.դ
գլխի վերնագիրը («Փոխումն հայրապետական աթոռոյն Աղուանից ի Չո-
ղայ [եւր Չորայ] եւ նստուցանել ի մեծ քաղաքին [եւր քաղաքն] Պարտաւ
զաթոռակալութիւնն՝ սակս Խազրաց հինին, որ յեւսն իւրեանց աներեցին [ա
աւարեցին]») եւ շարադրանքը («Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշ-
խարհս Աղուանից, երկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք: Այս յերկրորդ
ամին Խոսրովու արքայից արքայի, յորժամ զսկիզբն Հայ թուականին եղին
[ա չիք եղին], ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի
Չողայ [եւր Չորայ] քաղաքն ի մայրաքաղաքն Պարտաւ՝ վասն հինմաւա-
լած արշաւանացն թշնամեաց խաչին Քրիստոսի: Եւ նստուցին հայրապետ
գտէր Աբաս ի գաւառն Մեծարանց [եւր Մեծիւրեանց], որ կալեալ զաթոռն
ամս ԽԴ...»։ ՊԱ, էջ 118.17-119.6): Բուն Գ.իգ գլխում կաթողիկոսանիստի
տեղափոխման մասին պատմիչը թողել է միայն այսքանը. «ԺԳ. Տէր Աբաս,
որ ի սկզբանն թուականս Հայոց փոխեաց զաթոռ հայրապետութեանն ի
Չորայ ի Պարտաւ, կալեալ ամս ԽԴ, յեպիսկոպոսութենն Մեծիւրեանց [եւ
Մեծիւրեանց] կոչեցեալ» (ՊԱ, էջ 342.18-343.2): Դիշտ է՝ դրանից յետոյ Ա-
բասի մասին հաղորդում են ուրիշ, բաւականին մանրամասն տեղեկութիւն-
ներ (ՊԱ, էջ 343.2-16), որոնք մեզ կը հետաքրքրեն անելի ուշ:

Նախ, տեղին նշենք, որ Չող-Դերբենդի՝ կաթողիկոսանիստ լինելու
մասին վկայութիւն է պահպանուել նաեւ «Պատմութիւն Աղուանից»-ի Գ գր-
քի՝ ժամանակագրական տեղեկութիւններ պարունակող գլուխներից մե-
կում: Դրանց շարադրանքի հիմքում, մեր կարծիքով, ընկած են Աղուանից
կաթողիկոսարանի դիւանում պահուած ձեռագրերի յիշատակարաններում
գրանցուած ժամանակագրական վկայութիւններ, որոնք քաղուել եւ ամփո-
փուել են կան Մովսէս Դասիտորանցու, կան, որ անելի հաւանական է, նրա
որեւէ մի նախորդի կողմից իբրեւ տոհմամատեանային շարադրանք²: Այս-
տեղ ասում է. «Եւ ի ԴՃ [=731 թ.] թուականին դարձեալ Մախման շինէ
ԳԴարբանդ յանուն Տաճկաց, այլ *գկաթողիկոսարանն Արեւելից* ոչ աներէ,
որ դեռես կայ ի նմա» (ՊԱ, Գ.ժգ, էջ 320.15-17):

Արդ, եթէ «Աղուանից գաւազանագրքից» եկող Բ.դ գլխի տեղեկո-
թիւնից բխում է, թէ Աղուանից եկեղեցու կաթողիկոսանիստը Չողից Պար-
տաւ է տեղափոխուել միայն 552 թ., ապա միայն այդ թուականից յետոյ
կարող էր «*Պարտաւի* արքեպիսկոպոս» կոչուել Աղուանից եկեղեցու ղեկա-
վարը: Նման տրամաբանութեամբ մենք ենթադրում էինք, որ «Վաչագանի
վէպ»-ը եւ Աղունի կանոնները կարող էին ստեղծուած լինել միայն Ձ դարի
երկրորդ կեսին, 552 թ. յետոյ (սակայն դարավերջին սկսուած եկեղեցական
հակամարտութիւններից առաջ)՝ իբրեւ Աղուանից եկեղեցու այնպիսի ծրա-

գրային փաստաթղթեր, որոնց հեղինակները իրենց ապրած ժամանակի ինչ-ինչ իրողություններ (այդ թույ՛մ՝ Պարտալի՝ կաթողիկոսանիստ լինելը) վերագրել են իրենց նկարագրած դարաշրջանին՝ Ե դարի վերջին²⁴։ Սակայն ներկայումս, «Վաչագանի վեպ»-ի հաղորդած պատմական նիսի առանցքային վկայությունների հաւաստիութեան նկատմամբ վստահութեան լոյսի ներքոյ, մենք մեզ պարտաւորում ենք համարում վերանայելու հիմ մօտեցումը, թէկուզ եւ ստիպւած պէտք է լինենք ենթադրութիւնների օգնութեամբ լուծել որոշ նոր ծագող հակասութիւններ։

Սկսենք նրանից, որ ճիշտ չէր «Վաչագանի վեպ»-ը եւ Աղուէնի ժողովի արձանագրութիւնը լրիւ համաժամանակեայ համարելը։ Այսպէս, երկու աղբիւրում էլ յիշատակուող միեւնոյն անձանցից առնուազն մէկի համար առկայ են տուեալներ, որոնք ժամանակային որոշակի միջակայք են ենթադրում։ «Վեպի» երեք դրուագներում յիշուած է «Քազաւորի *դրան երէց*» Սանատն։ Ա.Ժ զլխում (էջ 60.14-16) Վաչագանը նրան ուղարկում է ճիւղերի Յրի քաղաքի մօտակայքում գտնուող Հակո զիւղում յայտնաբերուած Ջաքարիա եւ Պանդալեոն սրբերի նշխարներն իր մօտ՝ անունով չյիշատակուած թագաւորանիստ տեղափոխելու համար («Եւ զՍանատն՝ զիւր *դրան երէցն*, որ էր յոյժ հաւատարիմ, հանդերձ իւրովք պաշտաւնէիւք, առաքէր փութապէս առնուլ առ իւր [ա չիք առ իւր] զամենասուրբ նշխարս վկայիցն [եւեւ զաստուածային այն զանձ *փիւ* զամենասուրբ...վկայիցն]», այնուհետեւ Ա.իւ զլխում, արդէն Գրիգորիսի նշխարների յայտնաբերման պատմութեան մէջ, Արածանք գիւղում Յովէլ սարկաւազի տեսած երագից յետոյ Վաչագանը Սանատնին եւ դրան սարկաւազ Յովէլին ուղարկում է Ամարաս, («Եւ արքայ յոյժ խնդալից եղեալ՝ զՍանատն՝ զիւր *դրան երէցն* եւ զնոյն սարկաւազն առաքէր յԱմարաս յառաջ քան զիւր երթալն»²⁵), եւ նոյնը կրկնում է քիչ անց. Ջարուէն գիւղում Վաչագանի տեսած երագից յետոյ («Եւ անդէն վաղվադակի զՍանատն՝ զիւր *դրան երէցն* յառաջ քան զիւր երթալն յԱմարաս յղեաց»)՝²⁶։ Այս նոյն Սանատն Աղուէնի ժողովի արձանագրութեան մէջ հանդէս է գալիս արդէն որպէս «Կապադակայ [ա Կապադայ] *եպիսկոպոս*»²⁷։ Յայտնի է, որ Կապադակը Բուն Աղուանքի թագաւորութեան մայրաքաղաքն էր սկսած մ. թ. ա. Ա դարից²⁸, ուստի շատ բնական է, որ այդ քաղաքի եպիսկոպոս կարող էր դառնալ թագաւորական «*դրան* երէցը»։

Տեղին նշենք, որ Վաչագան Բարեպաշտի մայրաքաղաքի անունը «Վաչագանի վեպ»-ում չի տրուում։ Սակայն, պատահական չի թույմ, որ նրա արքունիքի մասին խօսուած է միայն մէկ տեղում՝ Ա.իւ զլխի սկզբում՝ այն Խոճկոռիկ իշխանի տեսիլքի կապակցութեամբ, որը Կուրի ծախափնեակում, հետագայի Ըսմախոյ շրջակայքում գտնուած Յրի քաղաքի (Կապադակից մօտ 75 կմ արեւելք) «գործակալն» էր («Եւ զայր այրն սա *արքունիսն* [եւեւ ի պալատն արքունի] եւ թուէր, եթ արքայ ի քուն իցէ, եւ ինքն ոչ իշխէր [ա չիշխէր] զարթուցանել»)՝²⁹։ Աւելացնենք, որ Ա.Ժ զլխում (էջ 60.5-7) Խոճկոռիկը նոյն Յրի քաղաքում Ջաքարիայի եւ Պանդալեոնի նշխարների գիտից յետոյ արագօրէն ձիով հասնում է Վաչագան արքայի մօտ («Եւ

ինքն սւշտանակեալ ի ձի [a դէսպան ձիով. եւր հեծեալ յերկար մի] գեղեցիկ՝ *ճեպեր հասանել* առ Բարեպաշտն Վաչագան՝ պատմել գերեւումն մեծագոյն նշանացն [եւր հրաշիցն]»): Այս առիթով մախորդ աշխատանքում կարեւոր ենք համարել նաեւ նշել այն տեսակետի արդարացումը չլինելը, ըստ որի՝ Վաչագան Բարեպաշտի թագաւորամիտը կարող էր լինել Գիւտական կամ Դիւտական կոչուող գիւղը՝ Արցախի նահանգի Մեծ Կողմանք եւ Ուտիքի Ուտի-Առանձնակ գաւառների սահմանին, Տրտու գետի ձախ-սփնեայ սարալանջին²⁸:

Այսպիսով, Վաչագան Բարեպաշտի «դրան երեց» Մանասէի՝ «Կապաղակի եպիսկոպոս» դառնալն իսկի քան բնական պէտք է համարել: Դրանից թխում է նաեւ, որ նրա երկու կարգավիճակների (երեցի եւ եպիսկոպոսի) միջեւ անհրաժեշտ է որոշակի ժամանակային միջակայքի առկայութիւն ենթադրել, որը հենց մտնում է «Վաչագանի վէպ»-ի ստեղծման եւ Աղուեճի ժողովի գումարման միջեւ ընկած ժամանակահատուածի մէջ: Իսկ դա արդեն թոյլ է տալիս պնդել, որ նոյն ժամանակահատուածում կարող էր փոփոխութիւն տեղի ունեցած լինել նաեւ Շուփհադիշոյ կաթողիկոսի կարգավիճակի մէջ, որը, ինչպէս տեսանք, «Վաչագանի վէպ»-ում կոչւում էր «աւագ եպիսկոպոսապետ», իսկ Աղուեճի ժողովի արձանագրութեան մէջ՝ «Պարտաւայ արքեպիսկոպոս»:

Ժամանակին մենք անդրադարձել ենք գրեթէ առանց բացառութեան զրակամութեան մէջ մտած այն սխալին, ըստ որի՝ հաւաստիութիւն է վերագրում «Պատմութիւն Աղուանից»-ի Ա.Ժ գլխի յայտնի տեղեկութեանը՝ «Պերոգապատ..., որ այժմ կոչի Պարտաւ» քաղաքը Վաչէ Բ Աղուանից թագաւորի կողմից «ի հրամանն Պերոգի՝ պարսից արքայի» կառուցուած լինելու մասին²⁹: Կրկնենք, որ այդ տեղեկութիւնը չի դիմանում որեւէ քննադատութեան, Վաչէն, որն ապստամբել էր Մասանեան արքայից արքայ Յազկերտի մահից կամ նրա որդիների՝ Պերոգի եւ Որմիզդի միջեւ սկսուած արիմալի պատերազմից անմիջապէս յետոյ եւ Պերոգից կրած պարտութեան հետեւանքով հեռացել էր գահից, չէր կարող քաղաք կառուցել նոյն Պերոգի հրամանով: Միւս կողմից՝ այդ տեղեկութիւնը որեւէ զուգահեռ չի գտնում այլ հայկական եւ օտարերկրեայ աղբիւրներում: «Պատմութիւն Աղուանից»-ի մէջ բառացի արտագրուած, պայմանականօրէն «684 թ. պատմութիւն» անուանուած երկում, որը է դարի 30-80-ական թթ. անցքերի մասին ժամանակակից հեղինակի հաւաստի շարադրանք է պարունակում³⁰, Աղուանից երկրի մայրաքաղաքը 11 դէպքից 7 կամ 8-ում կոչւում է ոչ թէ «Պարտաւ» (այդպէս ընդամենը 3 հատուածում) կամ «Պերոգապատ» (այդպէս միայն մէկում), այլ «Պերոգ-Կաւատ»³¹: Իսկ այս անունը միջին պարսկերէն նշանակում է «Կաւատը՝ յաղթող»³² եւ ըստ այդմ վկայում, որ քաղաքի կառուցողը կամ պատուիրատուն եղել է հենց Կաւատ Ա Մասանեանը (488-531 թթ.):

Նոյնը հաղորդում են նաեւ արաբ մատենագիրները, որոնց ունեցած տեղեկութիւնները յանգում են ուշ սասանեան պատմական ամանդոյթին: Բալազուրին, Իբն Խորդադեհեհ, Իբն ալ-Ֆակիհը, Իբն ալ-Ասիրը եւ

Եակուտ ալ-Համալին գրում են, որ իր տիրակալութեան սկզբում Կաուսը կարողացաւ յաղթահարել Պարսից ազնուականութեան հօգը դիմադրութիւնը (որոնց յաջողութեց անգամ շուրջ երեք տարով գահ բարձրացնել նրա եղբորը՝ Ջամասպին՝ 496-498 թթ.), այնուհետեւ յաղթանակ տանել Բիզանդիայի հրահրումով Իրանի հիւսիս-արեւմտեան տիրոջները ներխուժած հիւսիս-կովկասեան ցեղերի՝ հոն-սաւիրների նկատմամբ (503-504 թթ.), որոնց դուրս մղմանը զուգընթաց արքան ամրապնդեց Կովկասեան սահմանները, նա մասնաւորապէս կառուցեց Բայլական եւ Բերդաւա (=Պարտաւ) քաղաքները, իսկ նրա որդին՝ Խոսրով Անուշիրուան արքայից արքան (531-579 թթ.) էլ աւելի ամրացրեց Կովկասեան պաշտպանական գիծը՝ կառուցելով Դերբենդի քարաշէն պարիսպը³³: Այս պատմութեան համաձայն՝ Պերդ-Կաուտ - Պարտաւ քաղաքի կառուցման ամենից յարմար ժամանակը պէտք է համարել Ջ դարի առաջին տասնամեակի երկրորդ կէսին սկսուած պարսկա-բիզանդական հաշտութեան եօթնամեակը (506-512 թթ.), երբ Կաուտ արքան Անաստաս կայսրից նաեւ մեծ զոմար ստացաւ Կովկասեան պաշտպանական գիծը հոն-սաւիրների դէմ ամրապնդելու նպատակով³⁴:

Ինչ վերաբերում է Պարտաւի անուան «Պերդապատ» տարբերակին, ապա դժուար չէ կոահել, որ այն, ամենայն հաւանականութեամբ, առաջացել է «Պերդկաւատ» անուան ձեալփոխման արդիւնքում՝ Մովսէս Դ-ասխուրանցու կամ նրա որեւէ նախորդի կողմից: Դ-ա հաւանաբար տեղի է ունեցել քաղաքանուան ժողովրդական պարզեցումը ընկալման եւ հայ մարդու համար սովորական «պատ» վերջամասով քաղաքանունների հետ զուգորդութեան արդիւնքում (հմմտ. Վաղարշապատ, Ներսէհապատ): Իսկ «Պերդ-ա-պատ», այսինքն՝ «Պերդի քաղաք» ընկալումից էլ պէտք է առաջացած համարել այն մտայնութիւնը, իբրեւ թէ քաղաքը կառուցուել է Պերդոգ արքայի հրամանով:

Վերադառնալով Շուվիադիշոյի՝ Պարտաւի արքեպիսկոպոս լինելու հաւաստիութեան պարագային՝ տեսնում ենք, որ դրան կարելի է վստահութեամբ վերաբերուել զոնէ այնքանով, որքանով Պարտաւ քաղաքը կառուցուել է, ամենայն հաւանականութեամբ, 506-512 թթ. միջակայքում, ուստի մեծ խոչընդոտ չկայ Վաղարշ արքայից արքայի (484-488 թթ.) կողմից թագաւորական իշխանութեան վերադարձումը Վաչագան Արշակունու օրօք արքունակալը «աւագ եպիսկոպոսապետին» ժամանակակից համարելու նորակառոյց մայրաքաղաքի կեանքի գոնէ առաջին տարիներին: Մնում է, սակայն, մի ուրիշ կարելոք հակասութիւն՝ նորակառոյց Պարտաւի՝ արքեպիսկոպոսանիստ լինելու հանգամանքը: Ճիշտ է, արաբ մատենագիրների վերը բերուած պատմութիւնը լիովին թոյլ է տալիս ենթադրել, որ Կովկասեան ամրութիւնները, այսինքն՝ հաւանաբար նաեւ Չողի կաւաշէն պարիսպը յաղթահարած հոն-սաւիրների ասպատակութիւնների առջեւ առնելուց յետոյ կառուցուած Պարտաւը ի սկզբանէ իբրեւ մարզպանանիստ է մասնաշաղկապուել: Այսինքն Աղուանից (Առան, Ռան) երկրի սասանեան վարչական կենտրոնի տեղափոխումը Չողից Պարտաւ թերեւս կարելի է վերագրել հէնց

Ձ դարի երկրորդ տասնամեակի առաջին կեսին: Սակայն դա դեռևս թոյլ չի տալիս նոյն ժամանակ Չոդից Պարտաւ տեղափոխուած համարել նաեւ Աղուանից եկեղեցու նստոցը, քանի դեռ մենք ունենք «Աղուանից գաւազանագրքին» յամբողջ վերը բերուած կոնկրետ տեղեկութիւնը, որն այդ տեղափոխութիւնը վերագրում է Հայոց թուականութեան առաջին տարւոյն՝ 552 թ.: Նշենք, որ մինչեւ այժմ ոչ ոք չի կասկածել այդ տեղեկութեան հաւաստիութեանը: Նախկինում մեր արտայայտած պնդման համաձայն՝ դրա օգտին վկայող պէտք էր համարել նաեւ այն հանգամանքը, որ սկսած Արաս Մեծ-իրանցի կաթողիկոսից «Գաւազանագիրքը» կանոնաւոր ժամանակագրական տեղեկութիւններ է հաղորդում, այն դէպքում, երբ դրանից առաջ նրա շարադրանքը խառնակ է:

Սակայն այժմ, երբ նոր քննութիւնը ստիպում է անելի մեծ վստահութիւն ցուցաբերել «Վաչագանի վէպ»-ի եւ Աղուեմի ժողովի արձանագրութեան վկայութիւններին, անհրաժեշտ է կրկին անդրադառնալ «Գաւազանագրքի» տեղեկութեանը: Նախ՝ պէտք է ուշադրութիւն գրաւի մեր նշած նոյն հանգամանքը, սակայն արդէն հակառակ առումով: «Գաւազանագիրքն», իրօք, կանոնաւոր տեղեկութիւններ է հաղորդում սկսած Արաս կաթողիկոսից, բայց եւնց դրանից էլ տրամաբանօրէն բխում է, որ Արասի մասին տեղեկատւութիւնը գտնուում է հեղինակի ունեցած առաւել հաւաստի եւ պակաս հաւաստի տեղեկութիւնների սահմանագծում: Այսինքն՝ եթէ մենք կարող ենք լրիւ վստահել Արասի աթոռակալութեան աւարտին վերաբերող հաղորդումներին, օրինակ՝ իշխած տարիների քանակին՝ 44, ապա նրա իշխանութեան սկզբին վերաբերող տեղեկութիւնների վրայ պէտք է տարածուի գրեթէ նոյն կասկածը, որին արժանի են այդ կաթողիկոսի նախորդների մասին խառնակ տեղեկութիւնները: Պատահական չի թոււմ, որ «Գաւազանագիրքը» հաւաստի ոչինչ չի հաղորդում Արասի անմիջական նախորդի մասին: Յամենայն դէպս պարզ է, որ դա աղբիւրի նշած Երեմիան չէ, քանի որ վերջինս իրականում Մաշտոցի ժամանակակիցն է եղել, այսինքն ապրել է Արասից մէկ դարից անելի առաջ³⁵: Որեւէ վստահութիւն չկայ նաեւ, որ Արասի իրական նախորդը եղել է Շուփհաղիշոն («Գաւազանագրքում», ըստ Բ խմբի գրչագրերի անխաթար ըմբերցման, վերջինիս յատկացուած երկրորդ տեղը՝ Եղիշայ սուաքեալից անմիջապէս յետոյ, բացարձակ եւ առայժմ լրիւ անբացատրելի անախրոնիզմ է), որը Վաչագանի ժամանակակիցն էր եւ մինչեւ Արաս հասնելու համար պէտք է աթոռակալած լինէր կէս դարից ոչ պակաս: Իսկ դա միայն տեսականօրէն բացառուած չէ, բացի այդ կարելի է յիշել նաեւ հայ-քաղկեդոնական պատմական աւանդոյթի եզակի հաղորդումը Արասի նախորդներ Պետրոսի եւ Գրիգորի մասին (իհարկէ, լրջօրէն զգուշանալով այդ աւանդոյթի անհաւաստիութեան եւ խառնակութեան վտանգներին)³⁶:

Այսպիսի տրամաբանութիւնն ուշադրութեան առնելու դէպքում թոււմ է, թէ հնարաւոր է փորձել՝ իբրեւ առանձին շերտեր իրարից տարանջատելու Արասի իշխանութեան սկզբի մասին «Գաւազանագրքի» յայտնած (անելի ճիշտ՝ այդ աղբիւրից Բ-դ գլուխ տեղափոխուած) տեղեկութեան

առանձին մասերը: Տարանջատուած առաջին մասը կարելի է համարել Ձ դարի սկզբների պատմական իրողութիւնների հետ համընկնող տեղեկութիւնը Աղուանից կաթողիկոսարանը Չողից Պարտաւ փոխադրելու մասին, իր պիսարո պատճառով հանդերձ. «Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, երկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք... ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից ի Չորայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ *վսան հինասիլած արշաւանաց թշնմեաց խաչին Զրիստոսի*» (ՊԱ, էջ 118.21 - 119.2-5): Իսկ ենթադրեալ մի երկրորդ աղբիւրի յանգող կարելի է համարել Աբասի՝ կաթողիկոս դառնալու թուականին վերաբերող տեղեկութիւնը. «Ապա յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքայի իրականում պէտք է լինէր «*Դ*-երորդ ամին»³¹], յորժամ սկիզբն Հայ թուականին եղին, ի սոյն ամի... նստուցին հայրապետ զՏէր Աբաս ի գաւառէն Սեծարանց [եւր Սեծիրեանց]» (ՊԱ, էջ 119.1-2, 5-6):

Նկատենք այն կարեւոր հանգամանքը, որ 550-ական թուականների համար հիսիսկովկասեան ցեղերի կողմից Կովկասեան սահմանագծի որեւէ խախտման մասին ուրիշ սկզբնաղբիւրները ոչինչ չգիտեն (այդ սահմանագիծը վերջնականապէս ամրացուել էր Խոսրով Անուշիրուանի իշխանութեան առաջին տարիներին)³²: Աւելացնենք նաեւ, որ «Գաւազանագորքի» տեղեկութիւնների մէջ ոչ միայն սկզբի, այլեւ մնացեալ հատուածներում նկատուում են իրական պատմութեանը հակասող հաղորդումներ, որոնք յանգում են այս կամ այն անհաստի սկզբնաղբիւրին: Օրինակ, նոյն Աբասին վերաբերող հատուածում կրկնուած են, ամենայն հաւանականութեամբ, հայ-քաղկեդոնական պատմական ասանդոյթի յօրինուածքներին վանգող տեղեկութիւններ՝ իբրեւ թէ այդ կաթողիկոսի կողմից «եւ խաչեցար լիսան մեր» միաբնակ բանաձեւը ընդունուած չլինելու մասին, որն իբրեւ թէ ընդունուեց միայն Եզր կաթողիկոսի ժամանակ Գարդմանի Ստեփաննոս եպիսկոպոսի ջանքերով. իրականում եւ՛ Աբասի, եւ՛ մոնոթեիզմին հարած Եզր Արաքեզացու եւ Ստեփաննոս Գարդմանացու ժամանակներում եղել է լրիւ հակառակը³³:

Այսպիսով, «Գաւազանագորքի» խառնակ տեղեկութեան հիման վրայ, թում է, թէ չի կարելի անվերապահօրէն մերժել Աղուեմի ժողովի արձանագրութեան վկայութիւնը՝ արդէն Շուփեաղիշոյ կաթողիկոսի եւ Վաչագան Բարեպաշտի օրօք Աղուանից կաթողիկոսանիստի՝ Չողից Պարտաւ տեղափոխուած լինելու մասին: Իսկ դա նշանակում է. որ Աղուեմի եկեղեցական ժողովը որոշակի հաւանականութեամբ հնարաւոր է թուագրել 510-ական թուականներով³⁴: Ինչ վերաբերում է «Վաչագանի վէպ»-ին, որը պէտք է գրուած լինէր ատելի վաղ, ապա նրա ստեղծումը ճիշտ կը լինէր վերագրել Զ դարի առաջին տասնամեակի սկզբներին (թերեւս՝ 501-502 թթ.), երբ Պարտաւ մարզպանանիստ-կաթողիկոսանիստը դեռեւս կառուցուած չէր եւ երկիրը խաղաղութեան շրջան էր ապրում: «Վէպում» նշմարում են նաեւ այլ հանգամանքներ, որոնք ստիպում են խոսափել նրա շարադրման ժամանակը Ձ դարի երկրորդ տասնամեակին վերագրելուց եւ մօտեցնում են այն Վաչագանի թագաւորութեան առաջին տարիներին: Օրինակ՝ Ա.Ժգ

գլխում բառականին մանրամասն եւ յուզական գոյներով եւ նկարագրուած Վաչագանի հովանատր Վաղարշ արքայից արքայի մախորդ Պերոզ Սուսանեանի բռնակալական տիրապետութեան աւարտական շրջանը եւ նրա կործանման պատմութիւնը «հեկիթադական ազգի» ձեռքով (484 թ.): Իսկ դա նշանակում է, որ «Վաչագանի վէպ»-ի շարադրման պահին դեռեւս թարմ են եղել հեղինակի կեանքի այդ ժամանակահատուածի տպատրութիւնները: Սակայն միաժամանակ չի կարելի պնդել, որ Վէպը գրուած է Վաչագանի գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ: Թէպէտ իր ռճական սռնածնայատկութիւնների պատճառով այն չի տալիս դէպքերի ժամանակագրութիւնը ըստ տարիների, սակայն պարզ է, որ Վաչագանին վերագրուած գործերը ժամանակային բառականին մեծ միջակայք են ենթադրում. Վաղարշի օրօք գահ բարձրանալը (ամենայն հաւանականութեամբ՝ 485 թ., Նուսրասալի պայմանագրի կնքման ժամանակ), քրիստոնէութիւնը ողջ երկրում վերականգնելը, Արցախում, Կամբէճանում եւ Բուս Աբուսնքում մի քանի ադանդների վերացումը, Ջաքարիայի ու Պանդալեռնի նշխարների յայտնաբերումը ճիւղերի Յրի քաղաքում (այսինքն՝ Կուրի ձախսփնեակում) եւ Գրիգորիսի նշխարների գիւտը Ամարասում (այսինքն՝ Արցախում):

Որ երկը չի գրուել Գրիգորիսի նշխարների գիւտից եւ դրանք Դիւտական հասցնելուց անմիջապէս յետոյ (այդ գործի նկարագրութեամբ է աւարտում շարադրանքը), երեսում է եզրափակիչ հատուածի մի արտայայտութիւնից, ուր ասում է սրբերի յիշատակը անճն տարի երկու անգամ կատարելու մասին. «Եւ զմնացեալն ի նշխարացն կնքեալ՝ մեծաւ զգուշութեամբ տայր պահել ի սուրբ եւ յազնուական սենեկի... Թողոյր երիցունս եւ սարկաւագունս եւ յովազոյն գունդ սլաշտաւնէից, եւ ինքն *ի տալուոցն երկիցս անգամ* կատարէր զյիշատակ արքոցն զերիս հրիս աուրս»⁴¹: Պարզ է, որ զոճէ մի քանի տարի արքայի կողմից պէտք է կատարուած լինէր այդպիսի երկրպագութիւնը, որպէսզի հեղինակը գրէր դրա մասին: Նոյն կերպ՝ Ա.Ժք գլխում Ջաքարիայի եւ Պանդալեռնի նշխարների յայտնաբերումից յետոյ թագաւորի ուրախութեան եւ սրբերի երկրպագութեան նկարագրութիւնը իր մանրամասներով ու բարձրաճ գեղարուեստականութեամբ թողնում է դէպքից անմիջապէս յետոյ շարադրուածի տպատրութիւն: Սակայն գլխի վերջում միայն մէկ պարբերութիւն՝ զաւակ չունեցող արքային նշխարների գիւտի շնորհիւ, Բարձրեալի կամօք առաջնեկի (Պանդալեռն անունով որդու) պարգեւման մասին, անմիջապէս ցոյց է տալիս, որ մեր մախնական տպատրութիւնը վէպին բնորոշ ռճի արդիւնք է, իսկ շարադրանքի պահին գիւտից առնուազն 9 ամիս պէտք է անցած լինէր: Իսկ Ամարասում Գրիգորիսի մասունքների յայտնաբերման պահին (այս նկարագրութիւնը նոյնպէս անմիջապէս գրուածի տպատրութիւն է թողնում) Վաչագանն արդէն նաեւ դուտր ունէր՝ Խնչիկ անունով եւ պատմեական տարիքի («տղա հասակով [bclrz տղայական հասակաւ]»⁴², այսինքն՝ զոճէ 12-13 տարեկան), որը մի նոր ժամանակային միջակայքի առկայութիւն է ցոյց տալիս:

Անփոփելով «Վաչագանի վէպ»-ի շարադրման ժամանակի մասին քննութիւնը՝ շեշտը, որ այն առաւել մեծ հաւանականութեամբ հնարաւոր է

վերագրել Ձ դարի ամենաառաջին տարիներին. լրիւ չբացառելով նաեւ Ե դարի ամենավերջին տարիները: Դա Կաւատ արքայից արքայի՝ գահին վերադառնալուն (498 թ.) յաջորդած տարիներն են, մինչեւ պարսկա-բիւզանդական կարճատեւ պատերազմը (502-504 թթ.) եւ հիւսիսկովկասեան հոմասաւիրների աւերիչ ներխուժումը (503-504 թթ.), երբ «անիծեալ եւ չար Պարսիկը մարգպանքն»⁴³ երկրում չկային (նրանց գործառոյթները հաւանաբար փոխանցուած էին Աղուանից թագաւորին), երբ Հայաստանում շարունակուած էր Վահան Մամիկոնեանի մարգպանութեան բարեյաջող շրջանը, իսկ Վիրքում՝ Վախթանգ Գորգասաւի թագաւորութեան: Սեր կարծիքով, դա է ամենայարմար ժամանակը «Վաչագանի վէպ»-ի մնան մի ջատագովական երկի կամ վարքագրական վէպի ստեղծման համար, որի խնդիրն այնուամենայնիւ այդ արքայի ու նրա տոհմի կանոնատու պատմութիւնը գրելը չէր, այլ այն «ծրագրային» գործերի շարադրանքը, որոնք պէտք է կատարուէին եւ կատարուեցին նրա օրօք՝ ի շահ Սասանեաններին ենթակայ Աղուանից թագաւորութեան քրիստոնէայ հասարակութեան եւ եկեղեցու ամրապնդման («...եւ կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եղան»⁴⁴):

Աւարտելով աղբիւրագիտական տեղեկութիւնների այս վերլուծութիւնը՝ նախորդ աշխատանքում նշել էինք, որ մնան ժամանակագրական ճշգրտումներից յետոյ աւելի հաւանական է Վաչագան Բարեպաշտի գահակալման եւ Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան աւարտը (որեւէ սկզբնաղբիւրում չարձանագրուած) ոչ թէ ենթադրաբար դնել կլորացուած 510 թուականին, ինչպէս արուել է մինչեւ այժմ, այլ կապել Սասանեան տէրութեան այն ենթադրելի վարչական ռեֆորմի հետ (իւր մնացեալ մանրամասներով՝ առայժմ անյայտ), որի արդիւնքում Կաւատ արքայից արքայի կողմից վերացուեց նաեւ Վիրքի (Իրերիա-Ջարթլիի) թագաւորական իշխանութիւնը: Պրոկոպիոս Կեսարացու տեղեկութիւնների հիման վրայ մասնագէտները Վրաց Գուրգէն թագաւորի գահընկեց արուելը թուագրում են մօտաւորապէս 523 թուականով⁴⁵: Եթէ այսպիսի ենթադրութիւնն ընդունելի համարուի, ապա Բուն Աղուանքի անտիկ եւ վաղմիջմարդարեան թագաւորութեան վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունու պէտք է վերագրել 38-ամեայ իշխանութեան մի շրջան (485-523 թթ.): Իհարկէ, մնան մօտեցման դէպքում պէտք է նաեւ նորից կրկնել, որ աղբիւրների բացակայութեան պայմաններում այնուամենայնիւ հնարաւոր չէ Վաչագանի իշխանութեան բարեյաջող առաջին տասնամեակների հիման վրայ անպայման ենթադրել, որ բարեյաջող է եղել նաեւ մեզ առայժմ մանրամասնութիւններով անյայտ վերջին տասնամեակը (թէկուզ Հայոց եւ Վրաց օրինակով):

Սեր նշուած աշխատանքի հրապարակումից յետոյ գրականութեան մէջ մեզ հանդիպեց մի դրամագիտական տուեալ, որը թոյլ է տալիս լրացուցիչ փաստարկել 523 թուականի հաւանականութիւնը: 2003 թ. հրատարակուած Էդուարդ Խուրշուդեանի ծանրակշիռ մենագրութեան մէջ բերուած է դեռեւս 1993 թ. Ֆ. Գուրմէի կողմից յայտնաբերուած եւ հրատարա-

կուած՝ Կաւատ արքայից արքայի 35-րդ տարում (=522/523 թ.) թողարկուած երկու միատեսակ դրամների վրայ առկայ միացազրի (մոնոգրամ) ընթերցումը 'I'n ձեռով, այսինքն՝ ALAN կամ ARAN⁴⁶: Առաջին անգամ 523 թուականին այդպիսի միացազրի յայտնուելը եւ՝ Ֆ. Գուրմէն (իբրեւ տարբերակ), եւ՝ Է. Խուրշուդեանը իսկուած են կապելու իենց Վրաց թագաւորութեան իետ մէկտեղ Աղուանից թագաւորութեան վերացման եւ սյդ երկրներում Սասանեանների մարզպանական վարչակարգի հաստատման իետ:

Կարելի է յաւելել, որ այս առումով սասանեան դրամագիտական ճիւղը զարմանալի իետեղականութիւն է դրսեւորում: Մասնաւորապէս, ճշելի է, որ ARM (=ARMINA-Հայաստան) մակագրութեամբ սասանեան դրամներն ի յայտ են գալիս միմիայն Վարահիւրան Ե (Բահիւրան Գուր՝ 420-438 թթ.) արքայից արքայի ժամանակներում⁴⁷: որի օրօք 428 թ. Հայաստանում վերացուեց Արշակունեաց թագաւորութիւնը եւ մտցուեց մարզպանական կառավարում: Համեմատութեան համար կարելի է ճշել, որ Է դարի ամբողջ առաջին կեսին, ընդիտալ մինչեւ Սասանեանների անկումը 652 թ. թէ՛ Հայոց, թէ՛ Աղուանից, թէ՛ Վրաց մարզպանութիւնների քրիստոնեայ բնակչութիւնը օգտում էր անեմալայն ինքնավարութիւնից (համապատասխանաբար՝ Հայոց, Աղուանից եւ Վրաց իշխանների հաստատութիւնների շնորհիւ, որոնք ձեւաւորուեցին այդ դարասկզբին կամ ճախորդ դարի վերջին), սակայն Սասանեան արքաների անուններով դրամները, ի տարբերութիւն Այսրկովկասի երեք երկրների կիսանկախ թագաւորութիւնների գոյութեան ժամանակների՝ հատում էին անխափան կերպով⁴⁸:

ALEXAN HAKOBIAN

ON THE TIMING OF ARSHACID KINGDOM DOWNFALL IN ALBANIA

The article summarizes the facts that allow to date the end of reign of Albanian king Vachagan II to 523 A. D. – the time of king Kavad's reform which resulted to a downfall of Iberian king Gurgin's reign. The issuing of two coins with monogram 'I'n (=ARAN) on 35-th year of Kavad's reign (522/523 A.D.) also supports the facts in the article.

ՑԱՆՕՑԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես Մովսէս Կաղանկատացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Զննական բնագիւղը եւ ճերածութիւնը Վարազ Առաքելեանի. Երեւան, 1983 (այսուհետեւ՝ ՊԱ): Մովսէս Դասխտրացու երկի մասին վերջին ամփոփումը տես՝ Ա. Ա. Акопян, *Албания-Алуганк в греко-латинских и древнесарматских источниках*, Ереван, 1987, էջ 150-272: «Պատմութիւն Աղուանից»-ի գրչագրերի մանրամասն քննութիւնը եւ ճրանց ճիւղագրութիւնը տես՝ Ա. Յակոբեան, Մովսէս Կաղանկատացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը. «Բանբեր Մատենադարանի», 15, Երեւան, 1986, էջ 110-143:
2. Մովսէս Դասխտրացու աղբիւրների մասին մանրամասն տես՝ История аргави Монсея Каганкатваци. Пер. К. Патканова, СПб., 1861, էջ X-XII; A. Manandian, Beitrge zur

albanischen Geschichte, Leipzig, 1897. էջ 17-22: Հ. Ն. Ալկինբան, Մովսես Դասխուրյանցի (կոչումով Կաղանկաստացի) և իր Պատմություն Աղուանից, Վիեննա, 1970: Հ. Ս. Սվազբան, Մովսես Կաղանկաստու առաջին «Աղուանից աշխարհի պատմություն» աղբյուրները, «ՊԻՆՀ», 1972, քիւ 3, էջ 195-206: К. А. Каграмаян, Источники "Истории страны Алуанк", Авторф. дисс. ... к. и. н., Ереван, 1973: А. А. Ахоян, Албания-Алуанк, էջ 177-210:

3. Միաժամանակ պարզաբանում է, որ Վաչագամի մասին երկի հետ զոմե ուղիղ կապ չունեն Ա.իդ-ի գլուխները: Դրանցում ներկայացված են Վաչագամի կարգումների պատասխանները, որոնց հեղինակներն են Մատթե Գիտմաուր երեքը (պահպանունել է միայն «Պատմություն Աղուանից»-ում. տես նաև Մատթե Գիտմաուր, Հարցումն արքային Վաչագամայ, Առաջաբանը և գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց» (այսուհետև՝ «ՄՀ»), հ. Գ. 2 գար. Ամբիկիաս, 2004, էջ 357-360) և Արքահաճ Մամիկոնեից եպիսկոպոսը («Պատմություն Աղուանից»-ում՝ մեկ հատում. ամբողջությունը պահպանունել է Հայոց կանոնագրքի դասական խմբագրության ձեռագրերում. տես Կանոնագիրք Հայոց, Ա, Աշխատասիրություններ Վ. Յակոբեանի, Երևան, 1964, էջ 501-506: Արքահաճ Մամիկոնեան, Թուրք վանք մեջեցեղից, Առաջաբանը և գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ», հ. Գ. 2 դար. Ամբիկիաս, 2004, էջ 363-370. հմմտ. Հ. Բ. Մարգարիտյան, Արքահաճ Մամիկոնեից եպիսկոպոսն և իր առ Վաչագամ գրած թուղթն, Վիեննայի-Մ.Ղազար, 1899, էջ ԺԴ-ԺԵ), ինչպես նաև Աղուանի եկեղեցիական ժողովի կանոնները (պահպանունել է նաև Հայոց կանոնագրքի դասական խմբագրության ձեռագրերում. տես Կանոնագիրք Հայոց, Բ, Աշխ. Վ. Յակոբեանի, Երևան, 1971, էջ 91-100: Վաչագամ Աղուանից արքայ, Մահմաճաղուրդի կանոնական ի Վաչագամայ Աղուանից արքայէ եղեալ ի ժողովայն, որ յԱղուանն եղեւ, Առաջաբանը և գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ», հ. Գ. 2 դար. Ամբիկիաս, 2004, էջ 127-140): Մրանք ինքնուրույն գործեր են, որոնք մախադր գլուխներից և իրարից տարբերում են նաև լեզուաբանական առանձնապատկերներով: Նոյն պատճառով Վաչագամի մասին երկի մաս չի կարող լինել նաև «Պատմություն Աղուանից»-ի՝ Հ. Ներսես Ալկինբանի մատմանչած Ա.գ գլուխը (զոմե ամբողջություններ), որը պարունակում է Եղիշայ Կասաբեայի պատմությունը: Եթե Եղիշայի անունը և նրա նշխարների գիտը յայտնի լինեին երկի հեղինակին, ապա այդ սրբի յիշատակությանը ից հանդիպեինք նրա զոմե այն տողերում, որ Վաչագամի հրամանով հասարցում են Աղուանից արքային վայրերում պահուող սուրբ նշխարները (Գրիգոր Լուսավորչի, Զաքարիայի, Պանդարեանի, Հովսիսիմեի և Գայիանեի), որպեսզի նրանց օգնությանը բացայայտուի Գրիգորիսի նշխարների տեղը: Իրականում առաջին հերթին հենց «Վաչագամի վեպ»-ում յիշատակուած չլինելու պատճառով է պարզ, որ Եղիշայ առաքելայի և Ումայր թագաւորի հետ կոսպուող Աղուանից լուսավորության պատմությունները ստեղծուած են 2 դարի վերջից կամ է դարի սկզբից ոչ վաղ և արդիւնք են այդ ժամանակ ծագած՝ Վրաց և Աղուանից եկեղեցիների՝ Հայոց եկեղեցու գերագահության կարգավիճակից (ճշգրիտ՝ «առաջինը հաւասարների մեջ») ծերբազատուելու միտումների, որպիսիք դիտւոյ չեն նկատուած մեր երկում:
4. Հ. Ն. Ալկինբան, Մովսես Դասխուրյանցի, էջ 124-150 (ուսումնասիրողն այդ երկը լիովին անհամոզիչ փաստարկներով համարում է Ժ դարի սկզբի գործ, բայց միաժամանակ նշում է՝ «Գրական տեսակետ, սակայն, գնահատելի պէտք է դատել վեպ, որ գրուած է ծաղիկալ ռոմով»): К. А. Каграмаян, Источники "Истории страны Алуанк", էջ 22: А. А. Ахоян, Албания-Алуанк, էջ 183-188:
5. Մեր կողմից կազմունել և հրատարակունել է նաև «Վաչագամի վեպ»-ի նոր քննական բնագիրը (Ամառում, Կեանք և վարք Վաչագամայ արքայի, Առաջաբանը և գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ՄՀ», հ. Գ. 2 դար. Ամբիկիաս, 2004, էջ 51-112): Նրա տողաաւանկերում նշուած են միայն 2 դ. սկզբնօրինակի վերականգնման համար կարեւորություն ունեցող «Պատմություն Աղուանից»-ի ա և ե եր (Ք յոմբ՝ եւ եւ եր եմբայնբերով) գրչագրերի տարբերությունները: Ա.Ժ-ի գլուխների մասում օգտագործել ենք նաև Հայոց մի քանի ճաղմտիրներում պահպանուած հատուածային վարքագրական տարբերակը (շ): Ժամանակին մենք չտապել ենք համարել, որ այդ աարքե-

բակի ընդօրինակման համար մախազադափար է ծառայել ՊԱ Ա և Բ ձեռագրախմբերի մայրերից անկախ գրչագիր (Ա. Յակոբյան, Մովսես Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, էջ 137): Մակայն քննական քնագրի պատրաստման առիթով պարզել ենք, որ ճառընտիրների հատուածի մայր օրինակը յանգում է շատ տեղեկում իւրայատուկ խմբագրումներ ունեցող Բ խմբի այն մայր գրչագրին, որից առանձին արտագրուել է նաեւ մեզ հասած եւեւ ձեռագրերի ընդհանուր մայրը:

6. Մանրամասն տես 4. Ե. Ալինյան, Մովսես Դասխուրյանցի, էջ 124-127:
7. **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 188:
8. Տես «Հանդես ամսօրեայ», ՃԺԷ. տարի, Վիեննա-Երեւան, 2003, էջ 45-142:
9. Մանրամասն տես Աշոտյան աշխատանքում՝ «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2003, էջ 121-125:
10. Տես ՊԱ, Ա.իգ, էջ 84. 8-20: «ՄՀ», հ. Գ, էջ 110, նախ. 85-87:
11. Տես ՊԱ, Ա.իգ, էջ 94. 11-15: «ՄՀ», հ. Գ, էջ 139, նախ. 43: Ի դեպ, նախորդ հրատարակչները ուշ գրչագրերի հիման վրայ համարակալել են այս նախադասութիւնն իբրեւ Աղուանի ժողովի վերջին՝ ԻԲ կանոն, որպիսի «վերականգնումն» ընդունելի չի թում:
12. Տես ՊԱ, Ա.իգ, էջ 85.1-16: «ՄՀ», հ. Գ, էջ 110-111, նախ. 89-92:
13. Տես Բ. Ուրաքան, Դարձեալ Աղուանի ժողովի գումարման տարիների մասին, «ԼՀԳ», 1969, քի 6, էջ 55: *Мовсес Каланкатуа, История страны Алуанк, Перевод с древнеармянского, предисловие и комментарий III. В. Сиватяна, Ереван, 1984*, էջ 190:
14. Տես վերելում, ծան. 3:
15. ՊԱ, Ա.իգ, էջ 89.19-20: «ՄՀ», հ. Գ, էջ 133, նախ. 3:
16. Հայոց վաղ տոնամատենաների մասին մասնատրապես տես Ա. Յակոբյան, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին. «Հանդես Ամսօրեայ», ՃԺԷ տարի, Վիեննա-Երեւան, 2004, էջ 269-271:
17. Հմմտ. **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 185: Հայոց կանոնագրի քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբյանի ենթադրութիւնը հակառակն է (տես հ. Ա, էջ 346), սակայն դա չի հաստատում Աղուանի կանոնների մեր կազմած քննական քնագրի եամեմատութիւնների արդիւնքում (հմմտ. «ՄՀ», հ. Գ, էջ 133-139):
18. Տես Ա. Յակոբյան, Յովհաննէ Օմեցու «Կանոնագիրը Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին, «Հանդես Ամսօրեայ», ՃԻԱ տարի, Վիեննա-Երեւան, 2007, էջ 247:
19. Հմմտ. **В. В. Бартольд, Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925**, էջ 24; **М. И. Артамонов, История хазар, Ленинград, 1962**, էջ 119-122; **А. А. Кудрявцев, Древний Дерзепт, Москва, 1982**, էջ 83-84; **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 121-122:
20. Մանամասն տես **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 210-211; Ա. Յակոբյան, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը, էջ 269-271:
21. Մանամասն տես **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 212, 223-224: Ա. Յակոբյան, Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը, էջ 270-271:
22. Հմմտ. **А. А. Акопян, Алвания-Алуанк**, էջ 186-187:
23. ՊԱ, Ա.իւ, էջ 71.16-17: «ՄՀ», հ. Գ, էջ 96-97, նախ. 40: Այս տեղում Բ խմբի ձեռագրերը Մանասէի փոխարէն տալիս են Մատթէ երեցի անունը, «Ձուարճացիալ արքայ» վաղվադակի առաքէ զՄատթ (I զՄատթէ) երէց եւ զՅովէլ սարկաւազ յԱմարաս, նախքան զԻւր երթալն»: Մակայն տուեալ դէպքում կարելու չէ, թէ ո՞ր խմբի ընթերցումն է սկզբնօրինակայինը:
24. ՊԱ, Ա.իւ, էջ 73.1-2: «ՄՀ», հ. Գ, էջ 98, նախ. 48: Բ խմբի ձեռագրերը չունեն այս նախադասութիւնը: Նախապատմութիւնը տալիս ենք a ձեռագրին, քանի որ դժուար թէ որեւէ գրիչ (տուեալ դէպքում a-ի գրիչը) յօրինէր նման պատասխանատու տեղեկութիւն, իսկ արտագրութեան ժամանակ ինչ-ինչ արտայայտութիւններ վրիպումով քաջ թողնելը որեւէ գրչի համար (այդ թում Բ խմբի մայր ձեռագրի գրչի) սովորական քան է:
25. ՊԱ, Ա.իգ, էջ 89.20: «ՄՀ», հ. Գ, էջ 133, նախ. 3:
26. Հմմտ. *Очерки истории СССР. Первобытно-общинный строй в древнейшие государства на территории СССР, Москва, 1956*, էջ 484; **К. В. Тревер, Очерки по истории и культуре**

- Кавказской Албании, т. 142; А. А. Акопян, *Албания-Алуанк*, т. 36, ծան. 74; Հ. Ս. Սվազեան. Աղուանից աշխարհի պատմութիւն (հնագոյն շրջանից - VIII դարը ներառեալ), Երևան, 2006, էջ 67-68 շար.:
27. ՊԱ, Ա.իզ. էջ 79.1-2; «ԻԷՀ», հ. Գ. էջ 104, նախ. 35: Դիդերքերի երկրի Յրի քաղաքի տեղադրութիւնը Շամախի քաղաքի հատուածում ճշտուած է Բարկէի Յարութիւնեանի կողմից (Բ. Յարութիւնեան. Լիփնքի տեղադրութեան հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թիւ 1, էջ 122-123): Թուոմ է, թէ կարելի է աւելի ճշգրտել այդ տեղադրութիւնը ենթադրելով վաղմիջնադարեան «Յրի» քաղաքանունն հետ նոր ժամանակների Սարխան հայաբնակ գիւղի (Շամախուց 5 կմ արեւմուտք) անունն համապատասխանութիւնը, որն ամենայն հաւանականութեամբ քաղկացած է «Սաղի» հիմքից եւ իրանական «ան» տեղանունականերու վերջաւորութիւնից, իսկ Յ-Ս եւ Բ-Լ(Բ) հնչիւնական անցումները իրանալեզու միջավայրում յայտնի են եւ միջնադարեան Շիրուանի տարածքում լիովին հնարաւոր:
 28. Մամրամասն տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2003, էջ 109-110:
 29. Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, Երևան, 1984, էջ 193: Հմմտ. А. А. Акопян, *Албания-Алуанк*, էջ 217: Մեզ յայտնի միակ բացառութիւնը Եօզեֆ Մարկուարտն է, որը նշում է, որ Պարտաւը կառուցուած է Կաւատ Ա-ի կողմից (J. Marquart, *Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci*, Berlin, 1901, էջ 177):
 30. Այդ սկզբնաղբիւրի մասին մանրամասն տե՛ս А. А. Акопян, *Албания-Алуанк*, էջ 196-201; А. А. Акопян, О хронологии последних событий в «История 684 года», «Кавказ и Византия», вып. 6, Ереван, 1988, էջ 24-36: Զննական նոր բնագիրը տե՛ս Անանուն, 684 թուականի պատմութիւն, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, «ԻԷՀ», հ. Մ. Է. դար. Ամբիլիան, 2005, էջ 795-895:
 31. Տարբերակներ՝ Պերոզ-Կաւատ, Պերոզ-Ջաւատ (Ջաղաք). Փերոզ-Ջաւատ (ՊԱ, Բ.ծթ, էջ 178.2; 180.6; Բ.իդ. էջ 187.15; Բ.իհ, էջ 190.3; Բ.լա, էջ 212.3; Բ.լք, էջ 213.11; Բ.լթ, էջ 238.13-14):
 32. Հ. Աճառեան, Հայոց անճանաչման երկր քառարան, հ.Դ, Երևան, 1948, էջ 262:
 33. Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Բագրաս Խալաբեանը, Վիեննա, 1919, էջ 29; 125; СМОЛН, вып. 38, 1908, стр. 10, էջ 41, 43: Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 11. Արաբական աղբիւրներ, Ա. Իրն ալ-Մաիդ, Թարգմ. բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ս. Տեր-Ղեւոնդեանի, Երևան, 1981, էջ 42: Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 16. Արաբական աղբիւրներ, Գ. Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Ներածութիւնը եւ բնագրերից թարգմանութիւնները Ս. Տեր-Ղեւոնդեանի, Երևան, 2005, էջ 265-266, 448, 494-495:
 34. Այդ տարիների պարսկա-բիւզանդական ամօշութիւնների մասին բաւականին մանրամասն պատմում են Պրոկոպիոսը (De bello Persico, I, 7, 5. Պրոկոպիոս Կեսարացի (Բիւզանդական աղբիւրներ, Ա), թարգմանութիւն բնագիրը, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հրաչ Բարթիկեանի, Երևան, 1967, էջ 154) եւ ասորական ժամանակագրութիւնները (Է. В. Пигулевская, Месопотамия на рубеже V-VI вв. н. э. Сирьянская хроника Иешу Стилта как исторический источник, Москва-Ленинград, 1940, էջ 130; Է. В. Пигулевская, Сирьяские источники по истории народов СССР, Москва-Ленинград, 1941, էջ 155): Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, էջ 211; Ю. Р. Джафаров, К вопросу о первом появлении савир в Закавказье, «Вестник древней истории», Москва, 1979, № 3, էջ 163-172:
 35. «Դաւազանագրի»՝ Մովսէս Դասխուրանցու կողմից վերարտադրուած բնագրում «ԺԲ. Տեր Երեմիայ, ի սորա ատուրս արար գիր Աղուանից երանելին Մեսրոպ (Ա Մեսրոպ), որ եւ Հայոց եւ Վրաց ետ զնշանագիր ցանի մեծաւ: ԺԳ. Տեր Աբաս...» (ՊԱ, Գ.իզ. էջ 342.16-18): Աղուանից գրի ստեղծման առիթով Մաշտոցի եւ Երեմիայի համագործակցութեան ժամանակի մասին մեր ճշգրտումները վերջին ամգած տե՛ս Ա. Յակոբեան, Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խճորդները, «Միջազգային գիտա-ժողով՝ նուիրուած Հայոց գրերի գիտի 1600-ամեակին. Երևան, 12-17 սեպտեմբերի, 2005 թ.. Զննուցումների ժողովածոյ», Երևան, 2006, էջ 122-131:

36. Shu La Narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire par G Garitte. Louvain. 1952, էջ 38: Այս աղբիւրի մասին վերջին անգամ մանրամասն տես В. А. Арутюнов-Флавиан. Повествование о делах армянских. VII век. Источник и время. Москва, 2004. 4. Սելիքեան. «Narratiode rebus Armeniae» հայ-քաղեղոնական երկը վաղ միջնադարեան հայոց եկեղեցու պատմութեան կարեւոր սկզբնաղբիւր. Երեւան, 2007:
37. Ըստ Հ. Ներսէս Ալիմեանի՝ «...«յերկրորդ ամին Խոսրովոս» եւրկ է ուղղել «ի քսաներորդ ամին», հաւանդուն «ի Ի ամին» «ի Բ ամին» կարդացուած է: Խոսրով Ա-ի քսաներորդ տարին է 551/552» (Հ. Ն. Ալիմեան. Մովսէս Դասխուրացի, էջ 164): Տեղին ճշեմք մի կարեւոր փաստ. Խոսրով Ամուշիրուանի երկրորդ տարին է Դովանի ժողովի գումարման (պսիմքն՝ Արսաի ձեռնադրման) տարի համարում մաւ թ դարի Վրաց մատենագիր Արսէն Մափարիւնի. որն իր «Վրաց եւ Հայոց բաժանման մասին» երկը շարադրելիս օգտուել է հայ-քաղկեղոնական պատմական աւանդոյթի տեղեկութիւններէ (Լ. Մելիքեթ-Յեկ. Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին. հ. Ա (Ե-ԺԲ դար). Երեւան, 1934, էջ 40):
38. Հմմտ. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden. Aus der arabischen Chronik von Tabari, übersetzt von Th. Nöldeke, Leyden, 1879, էջ 340: A. Christensen, L'Iran sous les Sassanides. Copenhagen, 1944, էջ 359: М. М. Дьяконов. Очерк истории Древнего Ирана. Москва, 1961, էջ 313-314: «Պատմութիւն Աղուանից»-ի Բ-դ գլխում ներկայացուած «խազարական ասպատակութիւններն» հաւաստիութիւն վերագրելու ճանաչարհով Համիշա Տրեւորը փորձում է վերականգնել այդպիսի մի արշաւանք (К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, էջ 228): Սակայն վերը կատարուած քննութեան լայնի ներքայտի մտահոգութիւնը կարելի է ամբողջութեամբ փարատուած համարել:
39. Անելի մանրամասն՝ А. А. Акопян, Албания-Алуанк, էջ 194:
40. Ըստ այսմ՝ իրականութեան մեծնից անելի մօտեցած Բագրատ Ուրարաբեանի թուագրումը՝ «Աղուանի ժողովը գումարուել է Ե դարի վերջին կամ Զ դարի սկզբին» (տես Բ. Ուրարաբեան, դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմութեան, Երեւան, 1978, էջ 178), աներաժեշտ է մի փոքր էլ առաջ բերել, շուրջ 10-15 տարով:
41. ՊԱ, Ա.իգ, էջ 86.3-8: «ՄՀ», հ. Գ, էջ 112, նախ. 98:
42. ՊԱ, Ա.իգ, էջ 85.18: «ՄՀ», հ. Գ, էջ 111, նախ. 94:
43. Հմմտ. ՊԱ, Ա.ժը, էջ 52.1: «ՄՀ», հ. Գ, էջ 75, նախ. 8:
44. Հմմտ. ՊԱ, Ա.ժգ, էջ 42.8-9: «ՄՀ», հ. Գ, էջ 66, նախ. 01:
45. De bello Persico, I, 12, 4-14: Պրոկոպիոս Կեսարացի (Բիզանդական աղբիւրներ, Ա), էջ 154: Հմմտ. Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР. III-IX вв., Москва, 1958, էջ 251: Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, էջ 141-143:
46. F. Gurnet, A new Sasanian Mintmark? London, 1993: Э. III. Хуршудян, Армения и Сасанидский Иран (Историко-культурологическое исследование), Алматы, 2003, էջ 190-193:
47. Հմմտ. Э. III. Хуршудян, Армения и Сасанидский Иран, էջ 186:
48. Տես Э. III. Хуршудян, Армения и Сасанидский Иран, էջ 186-187, 193: